ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏ

—

ՔԹՈՎ ՇՈՒՆՉ ՔԱՇԵԼՈՒ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ. Բժիշկ Մի-շելը «Independance Belge»-ում բացատրում է քթով շունչ քաշելու կարևորութիւնը ամբողջ կազմուածքի համար։

Առաջին՝ քթի խոռչերը աւելի շատ օդ կարող են պարունակել քան բերանի խոռոչը։ Երկրորդ՝ բերանով շունչ քաշելիս շնչած օդի որակութիւնն էլ ուրիշ կլինի։

Օդը, մտնելով քթի խոռոչը և շփուելով նրա լորձամաշկի հետ, տաքանում է և խոնաւանում։ Քթով շունչ քաշելու առաւելութիւններից մէկն է և վարակիչ հիւանդութիւնների առաջն առնելը։ Նրա մէջ ընկնող փոշին կամ մնում է քթի միջի մազերի վրայ, կամ թէ մտնում է լորձամաշկի մէջ և դուրս է գալիս նրա արտաթորութեան հետ միասին։ Բացի դորանից քթի խոռչում կէս ժամ մնալուց յետոյ ամենամանրասակար մանրէն էլ անվնաս է դառնում։

Մինչդեռ բերանով շունչ քաշելը, մանաւանդ ցրտին շնչառութեան գործարանները հիւանդանալուն ընդունակ է դարձնում։ Դորանից է առաջ գալիս բրոնխիտ և ուրիշ նման հիւանդութիւններ։

Առանձին ուշադրութիւն պէտք է դարձնել երեխաների քթի առողջութեան և քթով կանոնաւոր շնչառութեան վրայ։

Նեարդային քայքայումը, որ պատահում է քթի խիտ մազերից, նրանց հեռացնելուց յետոյ անմիջապէս անյայտանում է։

Աւելին կասենք, բողազի ծռուելը առհասարակ վատ արիւնին ենք վերագրում, այն ինչ այդ հիւանդութիւնը ունենում են ծանր շնչառութիւն ունեցող երեխաները և երեխայի քթից պոլիպը հեռացնելուց յետոյ հիւանդութիւնը անմիջապէս անյայտանում է։

ՔՆԵԼՈՒ ՆՈՐ ՄԻՋՈՑ. Պ. Դ. Շլերբաչևը ծանուցել է քնելու մի նոր միջոց, որ բժշկականութեան մէջ Veronal անունն է կրում։ Պ. Ա. Բոնդիյրևի Մարդոցների անուան կլի-

նիկում կատարուած փորձերից երևում է, որ Վերօնալը շատ լաւ միջոց է քնի դէմ և գործում է նոյն իսկ այնտեղ, որտեղ միւս դեղերը չեն ներգործում. վերօնալից առաջացած քունը լինում է թեթև և բնական քնին շատ մօտ. քնից յետոյ հիւանդն զգում է իրան հանգստացած, կազդուրուած և առոյգ ու հետևեալ գիշեր քնում է արդէն առանց վերօնալի։

Վերօնալի այդ յատկութիւնը կայանում է նրանում, որ նա թունաւոր չէ և ուրիշ միջոցներից աւելի է ազդում։ Իսկ ինչ վերաբերում է հիւանդութիւն հանգստացնող յատկութեան, նա մորֆիից աւելի պակաս է ազդում։

Ներկայ եղողներին ծանօթացնելով վերօնալի, արեան շրջման, սրտի, շնչառութեան և մարսողութեան վրայ ունեցած ազդեցութեան հետ, պ. Շչերբաչևը ծանօթացրեց նաև վերօնալի մարդու կազմուածքի մէջ եղած փոփոխութիւնների և նրա արտաթորութիւնների վրայ կատարած հետազօտութիւնների հետ։ Օգտուելով քիմիականութիւնից, պ. Շչերբաչևը այն եզրակացութեան է եկել, որ մարդու կազմուածքի մէջ մտցրած վերօնալը արտադրւում է նրանից բոլորովին անփոփոխ դրութեամբ և շարունակում է ազդել բաւական երկար ժամանակ, 2—3 օր։

* *

Ֆրանսիացի բժիշկ Մուայէն զեկուցեց Փարիզի բժշկական ճեմարանին երակախտի (артеріосклерозъ) բժշկման մասին։ Ցիշեալ հիւանդութիւնը կայանում է նրանում, որ զարկերակների պատերը փոփոխւում են, կորցնելով իրանց առաձգականութիւնը և դորա հետ էլ արեան ճնշման դէմ անհրաժեշտ դիմադրութիւն ունեցող յատկութիւնը։ Մերութեան ժամանակ այդ հիւանդութիւնը սովորական է լինում. այդ հիւանդութեան վտանգը կայանում է նրա մէջ, որ զարկերակը կարող է տրաքուիլ և ուղեղի մէջ արեան հոսում գոյանալ։ Մինչև այժմ ոչ մի կանոնաւոր միջոց չկար նորա դէմ։ Եթէ Մուայէի միջոցը հաւանականութիւն գտնի բժշկականութեան մէջ, մեծ քայլ արուած կլինի դէպի առաջ։ Մուայէի միջոցը հետևեալն է։ Խիստ ելեքտրական հոսանքի օգնութեամբ երակների նորաճելութիւնն անցնում է և զարկերակը իր բնական դիրքն ընդունում, որով վտանգաւոր արեանհոսութեան առաջն է առնւում։

ՕՐ. ՆՈՒԱՐԴ ԱՂԱՆԵԱՆՑ